

Խ. Հ. ՄԵԼԻՔ-ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

## ՀԱՅ ՀԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԼԵԲՍԻԿԱՅԻ ՆԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայ հին բժշկագիտական հուշարձաններից շատերը մինչ օրս չեն հայտարարված, կամ չեն ուսումնասիրված, կամ թե դարերի ընթացքում կորսված են։ Այդ պատճառով էլ նախասովետական հայ պատմաբանները և քանասերները հայ հին բժշկության մասին խիստ կցկտուր և հաճախ հակասական տեղեկություններ են տվել։ Չնայած այդ հանգամանքին, այնուամենայնիվ հայ հին գրականության մեջ կան բժշկագիտական և բնագիտական բավականաչափ հարուստ նյութեր, որոնց վրա հատուկ ուշադրություն են դարձրել մի շարք հայ և օտար գիտնականներ և մասնավորապես պրոֆ. Լ. Հովհաննիսյանը, որը ի մի հավաքելով մինչ այդ հայտնի կամ անձամբ իր կողմից հայտաբերած նյութերը, ապացուցել է, որ դեռևս 5-րդ դարում Հայաստանում բժշկականությունը բավականաչափ բարձր մակարդակի վրա է գտնվելիս եղել<sup>1</sup>։

Պրոֆ. Լ. Հովհաննիսյանի այդ աշխատությունը այն անկասկած առաջնությունն ունի, որ խթան է հանդիսանում էլ ավելի խոր ուսումնասիրել հայ բժշկականության պատմությունը։

Հայ բժշկականության պատմության վերաբերող նյութերի մեջ առանձնակի և խիստ կարևոր նշանակություն ունի բժշկագիտական հայ տերմինաբանությունը, որը, ցավոք, առանձին ուշադրության չի արժանացել, մինչդեռ նա ևս կարող է մեզ հետաքրքրական տվյալներ ընձեռել հայ հին բժշկության ծագման և նրա հետագա զարգացման մասին։

Այս կամ այն ժողովրդի բժշկական տերմինաբանությունն, իրեն հայելի, արտացոլում է իր մեջ տվյալ ժողովրդի բժշկական

<sup>1</sup> Л. Оганесян—История медицины в Армении, ч. I. Ереван, 1946 г.

գիտութեան պատկերը, նշում է սեփական գիտական փորձի շահին ու սահմանը, միաժամանակ պարզում է նրանց ազդեցություններն ու հետագա պատմական զարգացման ուղիները:

Բոլոր եվրոպական ժողովուրդների վրա, օրինակ, մեծ ազդեցություն են ունեցել հունական և հռոմեական բժշկության և բնագիտական դպրոցները: Հենց դրանով է բացատրվում այն, որ այդ ժողովուրդների բժշկական ու բնադիտական լեզուիկայի մեջ մեծ քանակությամբ մուտք են գործել հույն և լատին բժշկական և բնագիտական բառ ու տերմիններ: Անգամ կենդանիների և բույսերից շատերի անունները եվրոպական ժողովուրդները փոխ են առել հույներից կամ հռոմայեցիներից, մոռացության տալով սեփական տերմինները: Այդպիսի փոխառությունների շարքին են պատկանում, օրինակ՝ I.eo, Tigris, Pelecanus, Platanus, Palma, Buxus, Straus, Cypressus և նման բազմաթիվ բառեր: Այդ նույն երևույթը տեղի է ունեցել նաև միջնադարի արևելյան երկրներում: Մի շարք ժողովուրդներ, ենթարկվելով արաբների բժշկականության ազդեցության, փոխ են առել նրանցից բժշկական բառ ու տերմիններ: Արևելյան ժողովուրդների մեջ հայերը բացառություն չեն կազմել: Հարևան կուլտուրական ժողովուրդների բժշկությունը նույնպես որոշ ազդեցություն է թողել հայերի վրա և դրա հետևանքով էլ հայ բժշկական և բնագիտական լեզուիկայի մեջ մտել են բավականաչափ օտար բառ-տերմիններ: Հայ հին գրականությունը հենց սկզբից տրամադրում է մեզ այդ ուղղությամբ հետաքրքրական սովյալներ:

Հայ գրականությունը 5-րդ դարից սկսած բուռն վերելք է ապրում: Այդ վերելքը նախապատրաստված է եղել գրերի գյուտին նախորդող դարաշրջանում: Բանավոր գրականության համընթաց՝ շնորհիվ երկրի արտադրողական ուժերի զարգացման՝ քաղաքական, հասարակական և տնտեսական զարգացման, հարստացել է նաև հայոց լեզուն և կարելի է ասել՝ ընդհանրացել Հայաստանի բնակչության մեջ: Հայ լեզվի զարգացման ու հարստացման հիմնական աղբյուրներն են եղել՝ բառամթերքի տեսագծով՝ նախ և առաջ տեղական ցեղակից լեզվախմբերը, ապա որոշ չափով արտաքին, օտար լեզուները՝ պարսկերենը, ասորերենը և հունարենը:

Հայերենի կոմպոնենտների մեջ զգալի տեղ են գրավում Հայկական Բարձրավանդակի տեղական ցեղախմբերի լեզուները, որոնցից բազմաթիվ բառեր ու բառաբանություններ են փոխառվել: Այդ փոխառությունները տեղի են ունեցել բազում դարերի ընթացքում

շնորհիվ հարատև քաղաքական, տնտեսական և հասարակական հարաբերությունների, տպա տեղական կուլտուրաների միաձուլման, միանգամայն հայացել են:

Երկրորդ հիմնական կոմպոնենտը հայերի հարևան իրանական լեզվախմբից փոխ առած բառերն ու բառարմատներն են: Դարեր շարունակ Իրանը գերիշխել է Հայաստանում (Աքեմենյաններ, Պարթև Արշակունիներ և Սասանյաններ), և այդ երկարատև քաղաքական տիրապետությունը որոշ հետք է թողել նաև հայերի կուլտուրական կյանքի զանազան բնագավառների, ինչպես և լեզվի վրա: Իրանական լեզվախմբից հայերը փոխ են առել, գլխավորապես քաղաքական, ռազմական, պետական-հասարակական և կուլտուրական բառ-տերմիններ: Սրանց մեծազույն մասը դեռևս մինչև քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն ճանաչվելը միանգամայն ընտանի էր դարձել ու վերջնականապես հայացվել, այնպես որ արդեն 5-րդ դարում դրանք համարվում էին բնիկ հայ բառեր:

Երրորդ կոմպոնենտը հայերենի մեջ՝ դա հունարեն և ասորերեն ծագում ունեցող բառամթերքն է: Այդ տիպի փոխառություններն արդյունք են հելլենիստական կուլտուրայի ազդեցության, որը փոքր ինչ ընդմիջվում է՝ հայ Արշակունիների շրջանում, ապա զգալի չափով ուժեղանում քրիստոնեությունը Հայաստանում տարածվելուց ու պետական կրոն ճանաչվելուց հետո, երբ հայ պետականությունը խզում է իր հարաբերությունն Իրանի հետ և քաղաքականապես ու կուլտուրապես թեքվում հունա-հռոմեական աշխարհի կողմը: Այս շրջանում է, որ հայ երիտասարդները խրմբերով մեկնում էին հունական և ասորական կուլտուրայի կենտրոններ՝ Աթենք, Ալեքսանդրիա, Եգիպտոս և այլ քաղաքներ, ծանոթանալու հունական և ասորական գրականության, գիտությունների, ինչպես և փիլիսոփայական հոսանքների հետ:

Հունաստանի և մասամբ էլ Ասորիքի հարաբերությունները հայերի հետ ուժեղանալու հետևանքով, Հայաստանը պատում է քրիստոնեական հիմնարկների ցանցով, իսկ հետագայում հայերի մեջ տարածվում են քրիստոնեական հույն և ասորի գրականություններն իրենց հատուկ տերմիններով: Հույներից և ասորիներից փոխ առած տերմիններն այս շրջանում գլխավորապես կրում են կրոնա-եկեղեցական բնույթ, օրինակ, եկեղեցի, եպիսկոպոս, եպարքոս, թեմ, կաթողիկոս, կանոն, շաբաթ, կիրակի, կնիք, մեռոն, սաղմոս, սինհոդոս, բաբունի, քահանա, սատանա և այլն:

Բնական է, որ ստեղծված պարագաներում հայերը փոխ են առել հուլյն և ասորի ժողովուրդներից նաև բժշկական և քնադիտական այնպիսի բառ ու տերմիններ, որոնք բացակայում էին հայերենի մեջ: Բայց և այնպես այդ տերմինների քանակը այնքան էլ մեծ չէ: Հայ հեղինակները՝ գրերի գյուտից անմիջապես հետո, թարգմանելով Ս. Գիրքը, այդ լեզուներից շատ քիչ բժշկական և քնադիտական բառ ու տերմիններ են փոխ առել: Ս. Գրքի մեջ հանդիպող 175 բժշկական և քնադիտական բառերից 128-ը բնիկ հայ բառեր են, իսկ մնացած 47 բառերը փոխ են առնված հետևյալ լեզուներից:<sup>1</sup>

| Հունարենից | Սեմական լեզուներից | Իրանական լեզուներից | Անաստույզ ծագում ունեցող բառեր |
|------------|--------------------|---------------------|--------------------------------|
| Զմուրս     | Բորակ              | Բժիշկ               | Ք ո գ                          |
| Կիւլբոս    | Զոպա               | Բոր. (բորոտ)        | Կարիճ                          |
| Կինամոն    | Թեհաշ              | Քունկ               | Կորեկ                          |
| Կ ե տ      | Կողամախ            | Կապիկ               | Հողամադ                        |
| Կասիա      | Մանանա             | Կնաբուկ             | Ու ո                           |
| Մանրազոր   | Շուշան             | Ղարալ               | Սամիթ                          |
| Նարդոս     | Ջայլամ             | Մողես               | Ս ո խ                          |
| Պրաս       | Սեխ                | Մուրտ               | Տատրակ                         |
| Քաղրան     | Տ բառ              | Չաման.              | Վուշ                           |
| Քարադր     |                    | Սարոյ               | Ընկույզ                        |
| 10 բառ     |                    | Սիրամալդ            | Ուլտ                           |
|            |                    | Սոխակ               | 11 բառ                         |
|            |                    | Սոաշխ               |                                |
|            |                    | Վիշառ               |                                |
|            |                    | Տզբուկ              |                                |
|            |                    | Ց ե ց               |                                |
|            |                    | Ք ո ո               |                                |
|            |                    | Փ ի դ               |                                |
|            |                    | 18 բառ              |                                |

Այս համեմատական ստուգաբանական տեսակետից պարզ էրևում է, որ հելլենական և ասորական կրթություն ստացած մեր թարգմանիչներն ավելի շատ են գործածել իրանական և անհայտ՝

<sup>1</sup> Բառերի ստուգաբանությունը կատարված է ըստ պրոֆ. Նր. Աճառյանի Արմատական բառարանի:

ամենայն հավանականությամբ, տեղական լեզվախմբերից, քան թե հունարենից և ասորերենից: Այս հանգամանքը շատ կարևոր է: Կարելի էր սպասել բոլորովին հակառակ արտադրանք, քանի որ իրանցիները քրիստոնեական տեսազօով դիտվում էին թշնամի թե՛ քաղաքականապես թե՛ կուլտուրապես, ուստի և թարգմանիչները պետք է խորշերին այդ լեզվից փոխառություններ անելու, մինչդեռ ստանում ենք հակառակը: Այդ նշանակում է, որ իրանական և տեղական փոխառությունները վաղուց ի վեր քաղաքացիություն են ստացել հայ լեզվակալի մեջ: Այստեղ կարևոր է նշել նաև մի այլ իրողություն, այն է՝ հայերն այդ շրջանում ունեցել են արդեն իրենց ազգային ախտաբանական տերմինները, ինչպես օրինակ, բոր, թանչ, խաղավարտ, կեղ, քոս, ջրգող, գոնջ, դոդ և այլն: Հետագայում դրանց ավելանում են նաև փոխառյալ հունական ախտաբանական տերմիններ, օրինակ՝ պատագրոս,<sup>1</sup> ելեփանդական:<sup>2</sup>

Եզնիկ Կողբացին<sup>3</sup> 5-րդ դարում թվում է մի շարք բույսերի անուններ, որոնք այն ժամանակ համարվում էին թունավոր և միաժամանակ բուժիչ հատկություն ունեցող, դրանք են՝ մանրագոր, հաղար, կաղանջան, կանեփուկ ու մուլախինդ:<sup>4</sup> Այս անունների մեջ միայն մանրագորն է հունարմատ:

Աղաթանգեղոսի մեջ հիշվում են 68 բույսերի անուններ: Դրանք են՝ արմավ, թուզ, խնձոր, տանձ, դեղձ, կիտրոն, բաղսամոն, դափնի, ձիթենի, սերկեվիլ, մուրտ, ընկույզ, նուշ, քնարուկ, հաճարուկ, թուֆ, թուզ, նուռ և այլն, մայր, նոճ, շոճ, թեղոշ, սարդ, սարոյ, սոս, յակրին, գիհ, կաղամախ, ուռի, տոսախ, մանրագոր, վարդ, շուշան, ասպուզան, յասմիկ, անխար, սմնակ, ներդիս, շամպղիտակ, մեղրուկ, հորոտ, մորոտ, մանիշակ, համասպրամ, լոռ, լարսակ, կնիւ, ցորեան, հաճար, դարի, կորեակ, գավարս, ոսպ, ոլոռն, որիզ, դկուզ, սիսեռ, դմնիկ, տատասկ, եղիճ, պատեղիճ, խայթահար, ժանտափուշ, սրափուշ, տափափուշ, որոմն, կայծակ, դաղձ:

Սրանցից միայն կիտրոն, բաղսամոն, դափնի, մանրագոր, ներդիս բառերն են, որ փոխ են առնվել հունարենից: Նույնը

<sup>1</sup> Աղաթանգեղոս — Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 393:

<sup>2</sup> Մ. Խորենացի — Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913, Գ. Բ. գլ. 10 և 11: 2:

<sup>3</sup> Եզնիկ Կողբացի — Եղծ ազանդոց, Թիֆլիս, 1934, էջ 47:

<sup>4</sup> Աղաթանգեղոս — Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 325:

նկատվում է նաև թարգմանական գրականության մեջ, որի հնագույն հուշարձաններից մեկը «Բարոյախոսն» է։ Ըստ Ն. Մառի և Մանուկ Աբեղյանի՝ «Բարոյախոսը» (հունարեն Physiologos) մի կոմպիլատիվ աշխատություն է, որի մեջ բերված են կենդանիների բարբի մասին զանազան քաղվածքներ, Նդուպտի և Պլինիուսի երկերից։ Այստեղ հիշված 60-ի չափ կենդանիների անուններից միայն մի քանիսն են փոխառնված հունարենից։

Այս բոլորից հետո ստացվում է այն տպավորությունը, որ իբր հայերը խուսափել են հունարեն բառեր գործածելուց։ Սակայն դա անհիմն է, քանի որ հեղինակներից շատերը, որոնք մեծ մասամբ հունական կրթություն էին ստացել, երբեք չէին խորշում հունարեն բառերից և հունաբանությունից։ Իսկ եթե ներկա դեպքում այդ տեղի է ունեցել, ապա դրա միակ բացատրությունն այն է, որ այդ ժամանակաշրջանում հայ բժշկական և բնագիտական լեզուի կան բավականաչափ հարուստ է եղել և հայ հեղինակները այնքան էլ կարիք չէին զգացել օտար լեզուներից շատ բառեր փոխառնելու։ Մեր այս կարծիքն աներկբայ է դարձնում նաև 5-րդ դարում հայերեն թարգմանված Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան» աշխատությունը։ Այստեղ ևս գործ են ածվում այն բնագիտական բառերը, որոնք առկա են Ս. Գրքի թարգմանության մեջ։ Բացառություն են կազմում մի քանի բառեր, ինչպես օրինակ՝ խեցգետինի փոխարեն երբեմն գործ է ածվում կարկինոս, հերձիի փոխարեն սքինոս։ Բացի այդ, այստեղ կան մի շարք հունարեն բառեր, ինչպես օրինակ՝ կետ, փոկ, տեղաղբ, դլիինք, սեղակ, սպունգ, ոստր, պողիպոդ, կտինք, կոկղիբ, ներդիս, սպինք, կիզք, սկարոս, էքինես և այլն։ Սրանք հին հայ գրականության համար նորություններ էին. և դա բնական է, որովհետև այդ բառ-տերմինները ծովային կենդանիների անուններ են։ Հայերը իբրև ցամաքային երկրի բնակիչներ, չունեին դրանց հայերեն անունները, ուստի ստիպված էին դրանք փոխառնել հունարենից։

«Յաղագս վեցօրեայ արարչութեան» մեջ կան նաև մի քանի բույսերի հունարեն անուններ։ Դրանք են՝ ալոնիտովն, կոնիովն, եղեբորոս, մեկոնիոն, պիվես, փսենաս, բաղսամոն, նարգես, նարդոս և այլն։ Այստեղ նկատվում է նաև մի ուրիշ երևույթ, այն է, որ հայ թարգմանիչը գործ է ածում ոչ միայն հայերենի մեջ բացակայող հունարեն անունները, այլև որոշ դեպքերում նա գերադասում է հունարեն բառերը, թեև դրանց հոմանիշը հայերենի մեջ

եղել է: Այսպէս օրինակ՝ հերձիի փոխարեն՝ սքինոս, մոլախինդի փոխարեն՝ կոնիոլն, և այլն: Չնայած այն հանգամանքին, որ մեր թարգմանիչը մերթ ընդ մերթ գերադասում է հունարեն բառերը, բայց և այնպես նա գործ է ածում այնպիսի հին տերմիններ, որ միանգամայն նրանից չէր կարելի սպասել, օրինակ՝ տարր, մաղձ, մաղաս, մրուր, հյուֆ, նյուֆ, chole, phlegma, hyle, ilos, մենք դա գործ ածեք stoicheon, բանի որ այդ տերմինները կապված են այդ ժամանակ հույների մեջ գոյություն ունեցող որոշ ուսմունքի հետ: Սակայն, երբ մեր թարգմանիչը, հակառակ մեր սպասածին, հունարենի փոխարեն գործ է ածում հայերեն տերմիններ, այդ ցույց է տալիս, որ հայկական տերմինները այնքան տարածված և ընդհանրացած էին, որ դրանց փոխարեն հունարեն բաներ գործածելը թարգմանիչը անհնարին է համարել:

Հայ հեղինակները հետագայում ևս շարունակում են այս գիծը: 6-րդ դարի նշանավոր փիլիսոփա և հելլենասեր հեղինակ Դավիթ Անհաղթը գերադասում է գործածել հայերեն տերմիններ, ինչպես օրինակ՝ տարր, երակ և այլն: Այդպես է վարվել նաև 7-րդ դարի հեղինակ Անանիա Շիրակացին: Նրա բառ-տերմինների մեջ բացառություն են կազմում տոբոս և բոնոս բառերը, որոնք ինչ որ առասպելական կենդանիների անուններ են:

8-րդ դարում հայերեն թարգմանվել է նմանախոսի Յաղազս բնութեան մարդոյ» երկը: Այստեղ ևս թարգմանիչը գերադասում է գործածել հայ բառեր: Վերջապես 10-րդ դարից մեզ ժառանգություն է մնացել մի բառարան՝ «Բառք Գաղիանոսի Բժշկապետի» անունով, որի մեջ մոտ 400 հունական բժշկական բառ-տերմիններ բացատրված են հին հայ տերմիններով: Ընդհանուր առմամբ մինչև 10-րդ դարը հայ գրականության մեջ գործ են ածված մոտ 900 բժշկական և բնագիտական արմատական բառեր և տերմիններ, որոնց մեջ հունարեն բառերը կազմում են միայն 10 տոկոսը:

Ի՞նչ են ասում վերը նկարագրված տվյալները: Ինչպե՞ս բացատրել այն հանգամանքը, որ հույն բժշկական-բնագիտական բառ-տերմինները այնքան փոքր տոկոս են կազմում հայ բժշկական-բնագիտական լեզուի մեջ, չնայած այն հանգամանքին, որ հելլենիստական շրջանում հույն կուլտուրան բավականաչափ տարածված է եղել Հայաստանում (հույն թատրոն, հայ թագավորների դրամները հունատառ, հայ թագավորների հունարեն արձանագրությունները, Արտավազդի հունարեն թատերական երկերը

և այլն)։ Այդ հարցումների միակ հնարավոր պատասխանն այն է, որ հայերը մինչ հելլենական դարաշրջանն արդեն ունեցել են իրենց բավականաչափ կազմակերպված և տարածված ժողովրդականացած բժշկական-բնագիտական տերմինաբանություն, ուր նորամուտ հունական տերմինները խորթ են թվացել ժողովրդին և վտարվել, մերժվել կամ մոռացության են տրվել հետագա շրջաններում։

Դարեր շարունակ հայերի կողմից բավականաչափ անզուսպ կողմնորոշում է տեղի ունեցել դեպի հույն կուլտուրան։ Սակայն այս շրջանումն էլ բառ-տերմինների դժով սակավ բան է փոխառնրված, քանի որ հայկական բժշկական ու բնագիտական տերմինաբանությունը զգալի չափով կայունացած է ինչպես։

Ի՞նչ պատկեր է ներկայացնում մինչ հունական շրջանի հայկական բժշկական, բնագիտական կայունացած տերմինաբանությունը ստուգաբանական տեսագծով։

Ինչպես վերը նշած է, այդ տերմինաբանության մեջ զգալի տեղ են գրավում անհայտ լեզուներից կատարված փոխառությունները։ Անհայտ լեզվական փոխառությունները մեծ մասով գալիս են տեղական, Հայաստանում ապրող բնիկների ցեղային լեզուներից, որոնք ժառանգություն են մնացել հայերին և հայացել, ազգայնացել։ Իրանականը հազարամյակի ընթացքում կատարված փոխառություններ են։

Իրանականից կատարված փոխառություններ էլ մինչև 5-րդ դարը միանգամայն մերվել, հարազատացել էին հայ լեքսիկայի մեջ և բոլորովին ազգայնացել։ Վերջին երկու լեզվաշինարարական տարրերն էլ հայ ժողովրդի ընդհանրական լեզվի հիմնական կոմպոնենտների շարքն էին անցել և երբեք խորթության տպավորություն չէին թողնում անգամ այն շրջանում, երբ հայ ժողովուրդը չորոնա-իդեոլոգիական բնագավառում իրանցիներից զատվեց և ժառանգեց նրանց հակադիր քրիստոնեական իդեոլոգիան։ Դրա լավագույն ապացույցն է այն, որ անգամ հայ եկեղեցական հեղինակները ավելի շատ խորշում էին հունական տերմիններից, քան իդեոլոգիապես խորթ, սակայն, ամբողջապես հարազատացած իրանականից։

Մինչև գրերի գյուտը (5-րդ դար) հայ լեզուն միանգամայն կայունացած էր։ Հետագայում մինչև արաբական տիրապետությունը (7-րդ դար) նա էլ ավելի հարստացել և ճոխացել է, հնարավորություն ունենալով հին դարերի ամբողջ գիտությունն ու

փրկիսօփայութիւնն առանց զգալի դժվարութեան թարգմանելու հայերեն:

Այս դարաշրջանում հայ ամբողջ բառապաշարի մեջ բժշկական-բնագիտական արմատական բառ-տերմինների թիվը հասնում է շուրջ 900-ի, մի զգալի թիվ, որին, եթե ավելացնելու լինենք նաև բարդութիւնները, հարկ կլինի եռապատկել այդ թիվը:

Սակայն այդ պատկառելի տերմինաբանութիւնը սոսկ բառաքանակ չէ, այլ լավագոյն ցուցանիշը այն բանի, որ այդ բառերով արտահայտված են բժշկական և բնագիտական որոշ իմաստութիւններ՝ զարգացված է բժշկութիւնն ու բնագիտութիւնը, գիտութիւններ, որոնք նախքան տառերի գլուտը բանավոր, թերևս դրավոր, մեզ անհայտ գրերով զարգացած են եղել հայ ժողովրդի մեջ մինչ արաբական շրջանում: Այդ ժողովրդական բժշկութիւնը պրիմիտիվ բնույթի կրել, քանի որ նրա մեջ կան մի շարք տերմիններ, ինչպէս օրինակ, տարր, մաղձ, մաղաս, նյութ, հյութ, մրուր և այլն:

Սրանք վկայում են այն մասին, որ հայերն արդեն ծանոթ են եղել հունական բժշկութեան և հարակից բնագիտական ուսմունքներին:

### ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Հայերը դեռևս 5-րդ դարի սկզբում ունեին հունականից անկախ իրենց սեփական ազգային բժշկական բառապաշար:

2. Նախահունական դարաշրջանում կերտված հայ բժշկական և բնագիտական լեզուի կազմված է գլխավորապես բնիկ հայ բառերից, իրանական և անստույգ ծագում ունեցող փոխառութիւններից:

3. Հայ հին բժշկական լեզուի կազմը ցույց է տալիս, որ բժշկութիւնը հայերի մեջ նախքան Հայաստանի քաղաքականապես Արեւմուտքին հարելը, դառնում էր բավականաչափ բարձր մակարդակի վրա:

## О ВОЗНИКНОВЕНИИ ДРЕВНЕАРМЯНСКИХ МЕДИЦИНСКИХ И БИОЛОГИЧЕСКИХ СЛОВ И ТЕРМИНОВ

Медицинский лексикон любого народа содержит ряд слов и терминов, по которым можно судить об истории происхождения медицинских знаний у данного народа. Ярким примером сказанного может служить медицинский лексикон многих европейских народов, насыщенный греческими и латинскими терминами, и свидетельствующий об огромном влиянии греко-римской медицины на медицинские познания этих народов. То же самое наблюдается среди народов ближнего Востока, лексикон которых насыщен арабскими терминами, ввиду того большого влияния, которое имела арабская культура на литературу и медицину этих народов.

Исходя из этого положения, мы, при изучении древнеармянского медицинского лексикона, можем установить некоторые интересные данные о происхождении и развитии древнеармянской медицины.

Медицинские и биологические термины встречаются у армян в первых же памятниках древнеармянской литературы.

С первой четверти III столетия н. э., с установлением династии Сасанидов в Иране, Армения вынуждена была прервать свои вековые добрососедские отношения с Ираном и ориентироваться на Запад. Эта ориентация имела для армян не только политическое, но и культурное значение. Армянская молодежь группами отправлялась в Афины, Александрию и другие центры эллинской культуры для изучения греческого языка, литературы, философии и т. д. С принятием армянами христианства (начало IV в.) в Армении были открыты греческие и сирийские школы, а спустя сто лет последовало изобретение армянской письменности. С принятием христианства в Армении распространилась богословская литература с ее специфическими терминами. Эти термины легко привились в армянском языке, так как соответствующих терминов у армян тогда не было. Армяне заимствовали у своих культурных соседей не

только церковные термины, но также научные, в частности медицинские и биологические термины, если, конечно, таковые не имелись на родном языке. Количество таких заимствованных терминов, однако, было невелико, что видно из приводимых ниже данных.

Библия, дважды переведенная на древнеармянский язык в первой половине V века, сперва с сирийского, а затем с греческого языков, содержит сравнительно мало греческих и сирийских медико-биологических слов и терминов. Из 175 медицинских и биологических слов и терминов, содержащихся в армянском переводе библии, имеется 10 слов, заимствованных с греческого языка, 8—с сирийского, 18—с иранского и 11 слов неизвестного происхождения. Остальные термины армянского происхождения. Отсюда создается впечатление, что при переводе библии армяне заимствовали больше слов и терминов у таких народов, которые во время перевода ее не играли никакой роли в литературно-общественной жизни Армении. Это особенно бросается в глаза, если иметь в виду, что переводчиками библии, главным образом, были армяне—эллинофилы.

В последующих армянских оригинальных произведениях термины греческого происхождения также встречаются редко. Так, известный философ V века Езник Кохпаци в своем труде говорит о пяти растениях, имеющих лечебное свойство. Из наименований этих растений только одно греческого происхождения. Из 68 растений, перечисленных в истории Армении Агатангелоса, только пять заимствованы с греческого языка. То же самое наблюдается и в древнейшем переводном памятнике светской литературы, в собраниях притч «Физиолога», в котором собраны басни и притчи Эзопа и Плиния из жизни животных. Малое количество заимствованных греческих медицинских и биологических терминов в армянской литературе применяется и в последующие века. Создается впечатление, что армянские авторы избегали заимствования медицинских и биологических слов и терминов с греческого языка. На самом же деле это является следствием того, что армяне еще в V веке имели довольно богатую медицинскую и биологическую терминологию. После всего вышесказанного возникает вопрос, в каких случаях армяне заимствовали греческие и сирийские медицин-

ские и биологические термины? На этот вопрос не трудно ответить, подвергнув анализу перевод книги Василия Кесарийского «Шестиднев». Труд этот переведен в V веке; в нем встречаются почти те же термины, которые приведены в других произведениях древнеармянской литературы. Наряду с этими, уже нам известными терминами, в армянском переводе этой книги имеется целый ряд терминов, заимствованных с греческого языка, как, например, дельфины, дедали, ктены, спины и т. д. Все эти названия морских животных или тропических растений. Армения, как континентальная страна, не была знакома с морскими животными и не имела их названий на родном языке, а потому они были заимствованы у греков.

Таким образом, по данным древнеармянской литературы, видно, что армяне еще с V века имели достаточно разработанную медицинскую терминологию, которая продолжала развиваться и в последующие века. Дошедший до нас памятник X века, медицинский «Словарь Галена», свидетельствует о том, что в последующие столетия в армянскую лексику вошло много греческих терминов; но термины эти не были в состоянии вытеснить древнеармянские термины, и применялись параллельно с ними, причем армянские термины были более понятны широкому слою населения, нежели греческие.

Помимо терминов греческого и сирийского происхождения в армянском медицинском и биологическом лексиконе имеют также термины иранского и неизвестного происхождения. Последняя группа терминов, вероятно, является наследием яфетических языков аборигенов Армении, ассимилировавшихся с армянским этносом. Термины же иранского происхождения, несомненно, являются последствием тысячелетней политической, экономической, социальной и культурной связи армянского народа с иранцами. Термины неизвестного и иранского происхождения за этот длительный период были освоены армянами и национализированы. Этим последним обстоятельством объясняется и то, с первого взгляда, непостижимое явление, что армянские переводчики—все адепты христианского вероучения, несмотря на непримиримую борьбу с иранизмом, все же употребляют термины иранского происхождения.

Из вышесказанного можно сделать следующие выводы:

1. В V веке армяне, независимо от греков, имели достаточно разработанную медицинскую терминологию.

2. Основными компонентами древнеармянской медицинской терминологии являются, во-первых, коренные армянские термины, а также термины, заимствованные от иранцев и аборигенов Армении, которые в течение тысячелетий были освоены и национализированы.

3. Были заимствованы с греческого и сирийского языков названия тех представителей животного и растительного мира, которые были неизвестны Армении, и для которых не было соответствующих терминов на армянском языке.